

ԹԻԻ 18

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1911-12 ՇՐՋԱՆԻ
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ
ՆԻՍՏ ԵՃ.

11 նոյեմբեր 1911



Տպագրութիւն Ռ. ՍԱԳՍԵԱՆ
ՂԱԼԱԹԻԱ, ԳՈՒՐԶՈՆՊՈԼ ԽԱՆ, ԹԻՒ 7, Կ. ՊՕԼԻՍ

1911

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1911-1912 ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

Ն Ի Ս Տ ԺԸ

11 ՆՈՅԵՄԲԵՐ 1911 ՈՒՐԲԱՅ

ՆԱԽԱԳԱՀ.— Տեղապահ Տ. ՎԱՀՐԱՄ Արեպիսկ. ՄԱՆԿՅՈՒՆԻ
ԱՏԵՆԱՊԵՏ.— ՄԱՆՈՒԿ ԷՖ. ԱԶԱՐԵԱՆ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- 1.— Ընտրութիւն Պատրիարքի Հայոց Թուրքիոյ:
- 2.— Խնդիր Եօանէսի:
- 3.— Տեղեկագիր Ասենապետաց Դիւանի, ի մասին Թրքահայոց կողմէ
Ամենայն Հայոց Հայրապետութեան մասնացանկի գրին:

ԲԱՑՈՒՄ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՅ

Նիստը տեղի ունեցաւ Ղալաթիոյ խոր-
հրդարանին մէջ և ժամը 3 ին տասներ
բացուեցաւ ի ներկայութեան 55 երեսփոխա-
նաց որոց թիւը հասաւ ի վերջոյ 84ի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հրանտ էֆ. Ասատուր
այս օրուան նիստէն բացակայութիւնը հա-
ղորդած է զրաւոր կերպով, կարճաճաղդրենք
զինքը օրինաւոր բացակայ:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՈՒԹԵՆԷ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիր էֆ. Սիմօնեան
հրաժարական զրկած է երեսփոխանութիւնէ,
ատենադպիրէֆ. ին պիտի կարդայ իր նամակը:



բար կը թելադրէ Սինոդին մերժել այս տեսակ պատգամաւորութիւնը և պահանջել որ անձնիւր վիճակ առանձինն առանջինն մասնակցի ընտրութեան՝ եկեղեցական և աշխարհական պատգամաւորներով, միանգամայն քուէները զեղչել 90ի: Բայց Սինոդը կը ըզգուշանայ և չստ առաջ չերթար, և կը թողու, առարկելով խնդրոյն նորընտիր կաթողիկոսի իրաւասութեան և ձեռնհասութեան պատկանիլը:

Պալատէնիոյ խնդրոյ յուզումն եւս առիթ եղան Ռուս. կառավարութեան գրգռմանց և այլ և այլ թելադրութեանց թէ առգ և թէ Ս. Էջմիածնում:

1884 և 1885ի կրկնեալ կաթողիկոսական ընտրութեանց առթիւ, Տ. Ներսէս Վարժապետեան և Տ. Յարութիւն Վեհապետեան Արքեպս. Պատրիարքաց օրերում, Ազգ. Երեսփոխանական Ժողով՝ փոփանակ պատգամաւորներ զրկելու, երկար բարակ խորհրդակցութիւններէ զկնի, Յանձնաժողովներով տեղեկագիրներ կաղմկով, վերջապէս իւր քղթաւար զրկելով մի անձն գրաւորապէս չորս կաթողիկոսական ընտրելի ներկայացուց Էջմիածնում կաթողիկոսական տեղակալի միջոցաւ:

Տէր Մակար կաթողիկոսի առ Առաջնաժողովէն յետոյ, 1891 թուականներում, երբ Երեսփոխանական Ժողով գաղթած էր Պետական հարուածով, Տ. Խորէն Արքեպս. Պատրիարք Աշրգեան՝ Ռուսական խոստումներէն հրապուրուած և խրախուսուած, անձնական ակնկալութեամբ կուրացած, համարձակեցաւ հրահանգներ ստղ և զրկել իւրաքանչիւր վիճակէն եկեղեցական և աշխարհական պատգամաւորներ, ինչպէս Կ. Պոլսէն եւս երկու հոգի, Ռուսահայերէն իսկ չարունակելով պատգամաւորներ կարգել: Եւ Տ. Մկրտիչ Արքեպս. Խրիմեան ընտրուեցաւ, և Աշրգեան յուսաւրէպ մնաց:

1908-9ում եւս միեւնոյն ձեւով՝ բայց թրքահայ երեսփոխան. Ժողովոյ համաձայնութեամբ ընտրութիւն կատարուեցաւ Ս. Էջմիածնում յանձին Տ. Մատթէոս Բ. Արքեպս. Պատրիարքի:

Իսկ վերջնայն առ Աստուած փոխուելէն յետոյ, երրորդ անգամ լինելով, այս տարի պատգամաւորաց ընտրութիւնք կատարուեցան՝ չստ քիչ բացառութեամբ՝ թերի, Կի-

լիկեան եւս ձեռնպահ մնալով:

Վերջին կաթողիկոսական ընտրութեան առնէ՝ անտեսական տալեապն առիթ եղաւ որ Պատրիարքարան մի քանի վիճակոց պատգամաւորաց, որք գուրտէն էին, այսինքն ու ծխականներ, ճանապարհածախքեր վճարեն: Այս անգամ հնար չի կար, անտեսական տալեապն առիթ ծանրացած, չարունակուեցաւ որ վիճակները շուրտէն և Կովկասահայերէն պատգամաւորներ ընտրէին և զրկէին, թէեւ տեղ տեղ, ինչպէս Երեսփոխան, Պրուսա, Եսփրնէ, Կեսարիա եւս ստիպումներ եղան Պատրիարքարանէն՝ որ իրենց ծախքերով պատգամաւորներ զրկեն ու գժուարացան: անա այս համառօտագոյն տեղեկութիւնը, որ կարեւոր էր, յանձնելով Ժողովոյ ուշադրութեան, այլ եւս որոշումը կը մնայ պատկառելի Ժողովոյ:

Վ. Ե. Մ.

Բարձրաշնորհ

Տ. Վահրամ Ս. Արքեպ. Մանկունի

Ազգայնամ Պատր. Տեղապ. Հայոց Թրք. Բարձր Սրբազան Հայր,

Ըստ հրամանի Ձերդ բարձր Սրբազնութեան, ամայս Ծին շարժի որ, այցելեցինք Ռուսական վսեմ. Դեսպանին մօտ, ընկերակցութեամբ պատրիարքարանի Ֆրանսերէնի քարտուղար Յարութիւն Էֆ. Ալիխարի, Պէօթիւքտէրէի դեսպանատան մէջ:

Թէև յայտարարուեցաւ Նորին վսեմութեան թէ տեղապահ սրբազանը անձամբ կ'ուզէր այս գիմումը կատարել, բայց Նորին Սրբազնութիւնը անհանգիստ ըլլալուն՝ պաշտօն սուած է իր փոխանորդին զիմել ուղղակի դեսպանին, տեղեկանալու համար թէ կաթողիկոսական պատգամաւորներու մեկնումին առթիւ պէտք եղած հրահանգները արուած են ուր որ անկ է:

Վսեմ. Դեսպանն յայտարարեց թէ՝ մինչև այժմ ընտրուած պատգամաւորներու անունները պարունակող երեք ցանկերը որ հաղորդուած էին իրեն, նոյնութեամբ մատուցուած են, հեռագրով Բեղերապուրկ և թէ մինչև այդ վայրկեանը այդ խնդրոյ մասին որ եւ հրահանգ կամ որ եւ է պատասխան չէ ստացած, և խոստացաւ Ձեր Սրբազնութեան ուղարկել իր ստանալիք պատասխանը: Ամեն

պարագայի մէջ յարեց Պ. Չարիքօֆ, չի յուսար որ ընտրողական դործողութիւնք բազմին ու է գժուարութեան, քանի որ ցայժմ անոնք կատարուած են ըստ ընկալեալ սովորութեանց Պալատէնիոյ: Այս առթիւ ըստ նաև թէ Ռուս կառավարութիւնը ու է կերպով չուզեր ազդել ընտրութիւններուն վրայ, քանի որ ապահով է թէ ազգը լիակատար ղիտակցութեամբ կ'ընարէ իր կաթողիկոսը, որ միշտ կը վայելէ ամբողջ ազգին համարուածը և որ միշտ կրնայ ապահով ըլլայ Ռուս կառավարութեան բարեկամ պաշտպանութեան: Գալով իրեն, խնդրեց մենէ որ ապահովցնենք Ձեր Սրբազնութիւնը թէ ինքն անձնապէս մեծ ակնածանք կը տածէ հանգէպ Ձերդ Սրբազնութեան անձին և միշտ պատրաստ պիտի գտնեն զինքը նուիրելու այն ամէն ջանքերը, որ կրնան զիւրացնել ընտրական գործողութիւնները:

Այս համակիր զգացումներու արտայտութեան քաջակերտած, անտեղի չգտանք հաղորդել Նորին վսեմութեան թէ հեռագիր մը ստացուած էր Ս. Էջմիածնէն որով լուր կը արուէր թէ Սինոդի պրօկուրորը հրահանգ ստացած էր Ներքին Գործոց նախարարութենէ պատուիրել որ կաթողիկոսական ընտրութեան մասնակցող պատուիրակները ուղղակի իրենց թեմերէն ընտրուած ըլլան, ինչպէս նաև ուղղակի մեկնին զիրենք ընտրող թեմերէն: Այս նոր հրահանգը զիտել արուեցաւ վսեմ. դեսպանին, չստ գժուարութիւններու կը մասնէ ընտրական գործը, քանի որ թեմերու մեծաւոյն մասը ի նկատի առնելով եղանակին անարմարութիւնը, ժամանակի սղութիւնը և ճանապարհածախքերը վճարելու համար կարգ մը վիճակներու անտեղի անձուկ վիճակը, իր պատգամաւորները ընտրած է Կովկասի մէջ ընտրող ազգայններէն, իրենց ձայնը տալով այնպիսի Կովկասահայերուն որ ամէն կերպով վայելէն Ռուսական պետութեան և ազգին վստահութիւնը:

Վսեմ. դեսպանը ըսաւ թէ ինքն այդ խմատով ու է հրահանգ չէ ստացած և տեղեկութիւն չունի անցած զարձածէն, բայց աւելցուց, այդ հրահանգին պատճառելիքը անտեղեկութեանց առաջին առնելու համար պատշաճ կը տեսնէ որ Պատրիարքարանը իրեն հաղորդէ Կովկասէն արդէն ընտրուած պատգամաւորներու անունները, զորս յանձ-

նառու կ'ըլլար ընդփոխ յուղարկել Բեթերապուրկ հեռագրաւ ապագայ գժուարութեանց և թելադրանքութեանց առաջը առնելու համար: Այս մասին եւս վստահացուց թէ իր բոլոր ջանքը պիտի նուիրէր խնդրոյն, ժամ առաջ լուծում մը տալու համար:

Իր փափաքը և բարեյօժարութիւնը հաղորդելով Ձեր Բարձր. Սրբազնութեան:

Մնամ անձնուէր խոնարհ որդի

Պատր. Փոխանորդ

Ղեւոնդ. Մ. վրդ. Դուրեան

Բարձրաշնորհ

Տ. Վահրամ Ս. Արքեպս. Մանկունի

Ազգայնամ Պատր. Տեղապահ

Հայոց Թուրքիոյ

Բարձր. Սրբազան Հայր

Ըստ որոշման Խառն Ժողովոյ և յանձնարարարութեան Ձեր Սրբազնութեան, այսօր Ռուսական վսեմ. դեսպանին կողմէ արուած հեռագրական ժամագրութեան մը վրայ ներկայացանք Նորին Վսեմութեան, հետեւինս ունենալով Պատրիարքարանի Ֆրանսերէնի քարտուղարը և նախ հաղորդեցինք իրեն թէ՝ վերջին անգամ Պատրիարքարանի պատուիրակութեան հանգէպ իր ցոյց տուած սիրալիր վերաբերումը և հայ ազգին նկատմամբ տածած համակիր զգացումները գոհացմամբ իմացուած էին Խառն Ժողովի կողմէն:

Նորին Վսեմութիւնը զգամուած մեր այս արտայայտութիւններէն, այս անգամ ալ կրկնեց նախապէս յայտնեց իր արամադրութիւնները և ըսաւ թէ մեծ հաճոյքով պիտի կատարէ ինչ որ օգտակար կրնայ ըլլալ ազգին: Այս խրախուսական արտայայտութեան վրայ, զիտել տուինք Նորին Վսեմութեան թէ երկրորդ հեռագիր մը ստացուած էր կաթողիկոսական տեղակալէն որուն մէջ կը չէտուէր թէ կաթողիկոսական ընտրութեան մասնակցող պատուիրակները պէտք էին, ըստ բարձագոյն հրամանք. ընակիչները ըլլալ այն թեմին սրմէ ընտրուած էին:

Պ. Չարիքօֆ յայտարարեց թէ ինքը մինչև աչ վայրկեանին որ եւ է հրահանգ չէ ստացած իր կառավարութիւնէն և չի յուսար որ Ռուսական պետութիւնը այս կամ այն կ'զանակաւ ճնշում բանեցուցած ըլլայ ընտրողական գործողութեանց վրայ, սա գերազանց

պատճառաւ որ Ռուս պետութիւնը ամենէն լայն և ընդարձակ իրաւունքները տուած է Հայ ազգին, իր կաթողիկոսը ընտրելու այն ձեւով որ պատշաճ կը թուի իրեն, ինչպէս բացայայտ կերպով այս սկզբունքը պարզուած է Պալատինիայի մէջ որ փոփոխութիւն չի կրնար կրել որքան ատեն որ կաթողիկէսական աթոռը թափուր կը մնայ:

Առարկայէն, կան, սպեցուցինք, թէ այս արգելքը յառաջ եկած է այն կաթողիկէսին նկատմամբ կը կարծուի թէ՛ Պատրիարքարան մեր կողմէն ընտրելիներու ցանկ մը ներկայացուցած է ստիպելով կամ պարտադրելով որ թեմերը այդ ցանկէն ընտրեն իրենց պատգամաւորները, ինչ որ մի գուցէ պատճառ եղած ըլլայ այդ խափանարար որոշման:

— Նոյն իսկ եթէ այդպէս եղած ըլլայ, պատասխանեց Նորին Վսեմութիւնը, դարձեալ առարկութիւն չի կրնար ըլլուիլ, որովհետեւ ինչպէս արդէն ըսի Ռուս կառավարութիւնը ընտել կապակի չուզեր Հայոց ընտրական իրաւունքները որոյ մէջ բոլորովին ազատ ձգուած են շարժելու ինչպէս որ կը կամին, պայմանաւ որ ընտրական ձեւակերպութիւնները կանոնաւոր և օրինական եղանակաւ կատարուած ըլլան:

Յարեցինք թէ, որ և է կասկածի չի կար Ռուս կառավարութեան բարեացակամ արամադրութեանց վրայ, բայց միւս կողմէ սակայն Ազգը չկրնար բացառել վերջին վայրկեանի յարուցուած դժուարութեանց պատճառները, բայց եթէ արդիւնք նկատել ընտրական պայքարներու:

— Խիստ հաւանական է պատասխանեց Պ. Չարիքօֆ թէ ատիկայ յառաջ եկած ըլլայ ընտրական պայքարներուն արդիւնքն եղող թիւրիմացութեան զօրս մէջ տեղէն բառնալու համար անմիջապէս հեռագրել կը փութամ Բեթերսպուրկ, տեղեկացնելու համար թէ ընտրութիւնները շատ օրինաւոր եղանակաւ կատարուած են և համապատասխան են յանցելոյն կատարուած ընտրութիւններուն:

Իրաւ է որ ըսինք, այս անգամ Տաճկահայ թեմերը աւելի ստուար թուով պատուիրակներ ընտրած են իրենց Ռուսահայ ազգակիցներէն, բայց ատիկա վերագրելու է սղութեան և թեմական անտուկներու անձուկ վիճակին:

— Նոյն իսկ եթէ այդպէս եղած ըլլայ, պատասխանեց Նորին Վսեմութիւնը, նորէն ատոր դէմ առարկութիւն չի կրնար ըլլուիլ, քանի որ ընտրութիւնները ազգին ազատ կամքէն կախում ունին: Ըսէք խնդրեմ, Ձեր բարեկամներուն, պատուիրակ Պ. Չարիքօֆ, թէ Ռուս կառավարութիւնը ներկայ ընտրութիւններու մէջ որ և է յետին միտքերու չի ծառայիր, ինքը որ և է քանտիտա չունի այդպիսի նախատրութիւն մը նպատակաւ: Եւ երբ մեր պետութեան ինչպէս երեւցաւ Մալար կաթողիկոսի կաթողիկոսացումով — և յետոյ կ'ուզէ, ինչպէս յանցելոյն, այսուհետեւ ալ լայն ազատութիւն տալ Հայերուն իրենց կաթողիկոսը համարաչափութեամբ և ըստ իւր կամաց ընտրելու: Եւ միւս իսկ պիտի հեռագրեմ ուր որ անկէ և ստանալիք պատասխան պիտի փութամ հաղորդել որքան կարելի է շուտ պատրիարքարանիդ և կը յուսամ որ այս միջադէպը որ թիւրիմացութեան մը արդիւնք ըլլալ կը կարծեմ, չունենայ այն արդիւնքը որմէ կը վախցուի: Կը խնդրեմ յարգանքներս մատուցէք Նորին Սրբազնութեան Տեղապահ Ս. Հօր և ըսէք իրեն որ միշտ պատրաստ պիտի գտնէ զիս օգտակար ըլլալու Հայ Ազգին, ամէն անգամ որ ատիկի ներկայանայ:

Պ. Չարիքօֆ մասնաւորապէս խնդրեց որ հաղորդակից ընենք զինքը այս ամէն գէպերու և յուրերու, որոնք յաջարկութիւն կրնան ունենալ այս միջադէպին հետ:

Կրկին և երկրորդ անգամ զգացուցանուին հաւատարմութեամբ մեզ տալէ հտքը, անգամ մը ևս ազանդուցուց թէ լրջօրէն պիտի զբաղի այս խնդրով և կը յուսայ թէ նպատակաւոր ելքի մը պիտի յանգնի: Այս քաջալերութեան և յուսահատու խօսքերուն վրայ, հրաժեշտ առինք Նորին Վսեմութիւնէն, անգամ մը ևս իր բարեացակամութեան կոչ ուղղելէ հտքը:

Մեր տեսակցութեան տոյն արդիւնքը հաղորդելով Ձեր Բարձրաշնորհ Սրբազնութեան, կը փութամ մատչիլ ի համարցը Ս. աջոյդ:

Մնամ անձնուէր
Պատր. Փոխանորդ
Ղեւոնդ Ծ. վրդ. Դուրեան

Կ. Պոլիս 11 Նոյեմ. 1911

ՀԵՌԱԳԻՐ Ս. ԷԶՄԻԱՍՏԵՆ

Պատրիարքական Տեղապահ
Մանկունի Արքեպիսկոպոս
Կ. Պոլիս

Սինոթի պրոկուրորը ընտրական նոր հրահանգ ստացաւ Սերքին գործոց նախարարութիւնէ. պատգամաւորները պէտք է ընտրուած ըլլան իրենց թեմերէն: Նիւնոյր և ևս փոխարքային ազաչեցինք որ այս անգամուսն ընտրութիւնը նոյնպէս ձեւով կատարուի, որովհետեւ պատգամաւորները ընտրուած են և ժամանակը շատ կարճ: Կ'ազաչենք միւս նոյն գիծով մը ըրէք Ձեր գեղականին մօտ:

Տեղակալ
Գէորգ Արքեպիսկոպոս

Էջմիածին 4/17 Նոյեմ. 1911

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.— Տեղապահ ամէնքդ ալ լսեցիք կատարուած բանակցութեան արդիւնքը, կարծեմ թէ դուք ալ համամիտ էք ինձ հետ որ գեղականին բարեացակամութիւնը արժանի է մեր շնորհակալութեան:

Վ. ՍԵՐԷՆԿԻԻԼԵԱՆ ԷՅ.— Դիւտնը առանց ժողովին կարծիքը տանելու, շնորհակալութեան արտայայտութիւն չկրնար ընել: Մենք չենք մասնակցիր այդ շնորհակալութեան:

ՉԱՅՆԵՐ.— Ինչո՞ւ:

Դ. Տ. ՄՈՎՍԻՍԵԱՆ ԷՅ.— Մենք կը մասնակցինք:

Ե. ՇԻՐԻՆԵԱՆ ԷՅ.— Երբ մեզի նկատմամբ բարեացակամութիւն ցոյց կը արուի մենք իրաւունք չունինք շնորհակալութիւն յայտնելու:

Տ. Հ. ԴԻՄԱՔՍԵԱՆ Ս.— Ռուսական հողին մէջ կը կատարուի կաթողիկոսական ընտրութիւնը, և ընտրական օրէնքին զիստոր տրամադրութիւններէն մէկն է վերջինիս: Բիւզանդիոնի կայսերք և Պաշլուք իրենց ձեռքով կը գնէին կաթողիկոսը. Ռուսիոյ մէջ ալ ջանք կայ կաթողիկոս ընելու անոնք, որ գործիք կը գտնան կայսրերու ձեռք: Խրիմեան ու Իզմիրեան Ս. ներու ընտրութեան ատեն ալ նոյն բաները խորհ-

ուեցան, բայց վերջապէս ընտրուեցան այդ երկու երջանկ ոյժատակ հայրապետները որոնք ոչ ոսկիի մարդ էին ոչ արծաթի, այլ լայն սիրտ մը ունէին և բացարձակ հայրական խնամով վարուեցան: Խրիմեան Հայրիկ ազատամիտ եղաւ նոյն իսկ ամուսնալուծմանց խնդիրներու մէջ:

ՉԱՅՆԵՐ.— Ասոնք ի՞նչ կապ ունին խնդրոյն հետ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.— Կը խնդրեմ որ չընդմիջէք ատենադանը, նոյնպէս պիտի խնդրեմ Սրբազանէն որ ուղղակի խնդրոյն վրայ խօսի որպէսզի ժամանակի կորուստ չըլլայ: Պատմական մասը կարծեմ կարճ կապել յարմար է:

Տ. ՀՄԱՅԵԱՆ Ս.— (Շարունակելով) Կը խնդրեմ որ չընդմիջէք: Երբ հայկական համաժողովներ և կոտորածներ տեղի ունեցան, Խրիմեան Հայրիկ Էջմիածնայ գանձարանը բացաւ և կերակրեց հազարաւոր թշուառ հայեր և երբ Էջմիածնի դրամները և կալուածները դրուուեցան Խրիմեան գարձեալ նոյն արկութիւնը ցոյց տուաւ: Ռուսական վսեմ, գեղական Տեղապահ Ս. և փոխանորդին ըսեր է թէ լայն ազատութիւն տրուած է ընտրութիւն կատարելու, սակայն իրականութիւն մը կայ որ կը կաշկանդէ զմեզ: Սենք տեսնեք Խորէն Աշրգեան Ս. Պատրիարքութեան օրով որ ազատ թողուց մեզ պատգամաւոր ընտրելու մէջ և ըսուեցաւ նաեւ թէ անոնք որ չեն կրնար երթալ, կրնան իրենց ձայնը տալ արդէն ընտրուած պատգամաւորի մը: Կը խորհինք թէ այն ատեն ինչպէս ազատ թողուց մեզ, բայց այս անգամ նշանաւոր բան մը տեղի ունեցաւ ինչպէս գրած էր «Ազատամարտ» այսինքն մեր թեմականներէն 30 ձայնէն 20ը ուղտահայերուն արուած է այսինքն 35ն 2ը հոն մեր պատգամաւորներն են: Իբրեւ հայ եպիսկոպոս Ձեր ուշադրութեան պիտի ներկայացնէի այս պարագան, որուն մէջ նախատեսութիւն չեմ գտներ:

Ն. ՕՀԱՆԵԱՆ ԷՅ.— Դարմանը:

Տ. ՀՄԱՅԵԱՆ Ս.— Գալով դարմանին այստեղ խոհուն անձեր կան անոնք իրենց

առաջարկները պիտի բերեն հարկաւ: Եւ չւերհակալ եւ վսեմ. դեպքանէն իր յայտնած արեացականութեանը համար, սակայն մենք ալ միջոցներ խորհինք, կրնայ ըլլալ որ Ռուսիոյ դեպքանը 15 օր ետքը ըսէ որ ինք չի կրցաւ բան մը ընել: Իբր դարձան կ'առաջարկեմ հեռագրաւ խնդրել որ ըստ հնաւանդ սովորութիւն կատարուի ընտրութիւնը կամ յետաձգուի դառնան և այն ատեն աղգային վարչութիւնը մէջ տեղ դնէ 800 - 1000 տակիր...

ՉԱՅՆԵՐ. — Պրակո:

Տ. ՀՄԱՅԵՒԿ Ս. — (Շաւուկակելով): Երբ Երուսաղէմի քննիչներու համար զանազան առիթներով աղգային անուակը 1500 ոսկի վճառեց, ինչո՞ւ համար ամենայն հայոց հայրապետի ընտրութեան մասնակցելիք. պատգամաւորներու ծախքերոնն աղգային 800-100 ոսկի չյատկացնենք, մանաւանդ որ կարգ մը գաւառներ իրենց ծախքով կրնան երթալ միայն նօրքին դաւառներու կախօտ վիճակներուն 20-ական ոսկի տանք և ըսենք որ իրենց պատգամաւորը ուղղակի իրենք զրկեն: Եթէ մենք ասանց վրայ չխորհինք և Ռուսիոյ Կայսրը ըսէ որ ընտրութիւնները չարունակենք այն ատեն չեզոք կը մնանք որպէս զի անջրպետ մը չբացուի ուսանայոց և թրքահայոց միջև:

Տ. ՂԵՒՈՆԴ Վ. ԴՈՒՐԵԱՆ. — Ես պիտի խնդրէի Պատկ. Ժողովէդ, որ այսօր բաւականաբար տեղապահը Ս. ին հաղորդած տեղեկութիւններով միայն և վիճարանութիւններ տեղի չունենար: Վսեմ. դեպքանը խոստացած է պիտու կատարել և մենք պէտք է սպասենք անոր արդիւնքին. կը վախցուի որ արդիւնքը վտանգուի, այլեւայլ խօսքերով: Դեպքանը հեռագրաւ հաղորդակցութեան մէջ պիտի մտնէ իր կառավարութեան հետ, աւելնմ ինչպէս ելլենք այնպիսի տեսութիւններ պարզենք որ կացութեան բնաւ չպատշաճիր: Արդէն խոստացուեցաւ մեզի մինչեւ չորեքշաբթի պատասխան մը տալ, հետեւաբար բաւականանք հրապարակային չորհակալութիւն յայտնելով դեպքանին: Արդէն տեղակալ Ս. ն ալ յանձնարարած է ամեն դիմում ընել դեպքանին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՎ. — Գաղափարեան էֆէնդի խօսք ուղած է պիտի խօսի:

Վ. ԹԵՔԵՆԱՆ ԷՖ. — Նախ պէտք է ժողովը որոշում տայ այս նիւթին վրայ, պէտք է վիճարանիլ թէ ոչ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Փոխանորդ Հօր թէ բացատրութեան յետոյ վիճարանութիւնը պէտք է շարունակել թէ ոչ Ձեր քուէին կը դիմեմ:

ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — Պատասխան պիտի տամ այդ առաջարկին:

ՉԱՅՆԵՐ. — Չըլար, չըլար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ի կարգ կը հրաւիրեմ զՁեզ, եթէ այդպէս հիւսիսէն հարաւէն հարաւէն ձայներ զան դիւանա իր պարտականութիւնը կատարելու կը դիմարանայ:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — Խնդիրը փափու է. կը կարծուի թէ Տեղապահ Ս. ին տեղեկագիրը կարգացուելէ յետոյ, այլեւս խօսք ընելու պէտք չկայ. ասիկա ճիշդ է որովհետեւ եթէ Ազգ. Վարչութիւնը այնպէս կը նշկատէ որ խնդիրը Ազգ. Ժողովոյ ատենանդ լելէն յետոյ պէտք էր խօսուեր, բնականաբար պէտք է բերեր խնդիրը: Խօսիլ ըսելով պէտք է սակայն հասկնալ թէ խնդրոյն փափկութիւնը ասանց ըմբռնելու կրնայ խօսուիլ, ուստի պատշաճութեան սահմանը հասկնալով, կրնանք որոշման մը յանգիլ և հետեւաբար պէտք է որ խօսուի այս նիւթին վրայ:

Գ. Տ. ՄՈՎՍԵՍԵԱՆ ԷՖ. — Կէտ մը կամ որ լուսարանութեան կը կարօտի: Երբ գործող իշխանութիւնը այսպիսի խնդիր մը կը բերէ կարելի է որ վախճան մը չտրուի, ուրիշ բան է երբ պատասխանատու մարմինը եւ միջակ կրնամ գործել այս խնդրոյն մէջ և հարկ չեմ տեսներ որ խորհրդակցութիւն տեղի ունենայ կ'ըսէ: Կարգացուած փոխանորդ Հայր Սուրբին տեղեկագրէն կը հասկընանք թէ այս խնդրոյն ծագումէն անտեղեկակէնք, ուստի պէտք է մասնաւոր յանձնարարութիւն մը խորհրդակցութիւն տեղի ունենայ թէ մենք պահանջուած օգնութիւնը ինչ կերպով կրնանք կատարել: Այս խնդիրը կու-

տեմնասիրէ սիհուի մինչեւ յառաջիկայ յիստ և միւս կողմէ մենք ալ խնդիրը քննած պատրաստ կ'ըլլանք:

Ա. ՎՌԱՄԵԱՆ ԷՖ. — Վարչութիւնը սըլխաներ ըրած է պէտք է խօսուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թեր ու պէ՞մ կ'ուզէ՞ք որ խօսուի այս խնդրոյն վրայ:

Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ ԷՖ. — Վարչութիւնը թող խօսի:

Ո. ՄԱՐՏԻԿԵԱՆ ԷՖ. — Կը տեսնեմ որ խնդիրը սիսալ կերպով կը բացատրուի պատկանելի Ժողովիդ առջեւ: Երբ կ'ըսուի թէ Վարչութիւնը կը դիմէ այս Ժողովին խորհրդակցելու համար, կարծեմ թէ սիսալ մըն է որ տեղի կ'ունենայ: Քանի որ Ժողովը անցեալ նիստին Գեղամ էֆ. ի առաջարկութեան վրայ ինք որոշեց այսօր նկատուութեան անել այդ խնդիրը: Էջմիածնէն եկած առաջին հեռագիրը սիսալ կերպով մեկնուեցաւ, բայց երբ երկրորդ հեռագիրը եկաւ և որոշակի հասկցուեցաւ թէ ըսել կ'ուզուի որ ընտրուի իր երկրին բնիկը պիտի ըլլայ այդպէս պարագային դիմումներ ըրինք և հիմայ Փոխանորդ Հայրը կ'ըսէ որ խոստում տրուած է թէ խնդիրը պիտի կարգադրուի, ուստի հարկ է սպասել: Քանի որ եղած խօսքերէն կը հասկցուի որ քիչ ատենէն հպատակաւ պատասխան մը պիտի կրնայ տրուիլ ուստի խուճապի մասնաւոր հարկ չկայ: Թէ մենք աղգին վստակար ելքի մը պիտի յանգինք: Այս առիթով հարկ է ըսել թէ թրքահայ թեմականները շատ անտարբեր գտնուած են այս ընտրութեան խնդրոյն մէջ մինչեւ մենք ամէն կերպով հետապնդած ենք: Ոչ միայն հեռաւոր տեղերը այլ և ամենէն բարեկեցիք թեմներ այնքան անտարբեր գտնուած են որ ոմանք նոյն իսկ վերջնական պատասխան ալ չեն տուած: Երուսաղէմի տեղապահը որ որ հիմայ Գահիրէ գացած է, Էջմիածնայ վարդապետներէն մին պատգամաւոր կարգած է իր կողմէն: Միթէ Երուսաղէմ, Պրուսայ, Կեսարիա չէին կրնար պատուիրակ մը զրկել: Անոնք որ կ'ըսեն թէ չեն կրնար երթալ, անտարբեր են մեծագոյն մասամբ: Մինչեւ հիմայ թրքահայերուն ընտրած պատգամաւորներուն թիւը 53 է, որոնց 32ը Թուրքիոյ

հայերէն մէկը ուսմանահայերէն և 20ը ուսմանահայերէն. Հաւանական է որ նորանոր ընտրութիւններ ալ կը կատարուին մասամբ թրքահայերէն, մասամբ ալ ուսմանահայերէն. դիտելի է նաեւ որ պատգամաւորներէն առարկութիւն եղած չէ, և հիմա պրօկուրորին դիմումին վրայ է որ այս դիտողութիւնը կ'ըլլայ ներքին գործոց նախարարութենէն: Եթէ դեպքանը պիտի կարենայ մի փափաքած ելքին յանգիլ՝ բնականաբար խնդիրը կը վերջանայ, իսկ եթէ դեպքանը մեզի ըսէ նրկարելի է եղած կարգադրել խնդիրը, այն ատեն Վարչութիւնը ձեզի պիտի դիմէ: Քանի մը օր սպասելու մէջ ոչ մէկ յետի միտք կրնայ երեւակայուիլ և յախուռն դատաստանները մեր ուզած ելքին չեն տանիր մեզի: Հետեւաբար խնդիրը լքուած չէ:

Վարչութիւնը կ'ստանձնէ պատասխանատուութիւնը՝ ընելու հարկ եղած դիմումները ընդհանրական հայրապետին մասնակցութեան իրաւունքը լիովին գործադրելու համար:

Գ. Տ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԷՖ. — Տակաւին 41 պատգամաւոր չէ ընտրուած, և վերջերս զանազան տեղերէ հրահանգ կ'ուզէին, ասոնց պէտք է լուր տրուի հեռագրով:

Ո. ՄԱՐՏԻԿԵԱՆ ԷՖ. — Հրահանգները տրուած են, բայց մինչեւ այս նոր խնդրին ելքը, սպասողական վիճակի մէջ ենք, և չենք ուզեր պարապ ընտրութիւն կատարել:

Վ. ՍԵՐԷՆԿԻՒԼԵԱՆ ԷՖ. — Ո՞րն է պարապ ընտրութիւնը:

Ո. ՄԱՐՏԻԿԵԱՆ ԷՖ. — Ըսել կ'ուզեմ որ եթէ ուս կառավարութիւնը պնդէ իր տեսակետին վրայ և չընդունի Թուրքիոյ կողմէ ընտրուած ուսման յպատուիրակները՝ այն ատեն իրենց տեղերէն նորեր պիտի ընտրուին:

Ա. ՎՌԱՄԵԱՆ ԷՖ. — Վարչութիւնը չը զիտեր ուրեմն օրէնքները:

Վ. ՍԵՐԷՆԿԻՒԼԵԱՆ ԷՖ. — Եուք իրաւունք չունիք Ազգ. Ժողովոյ տեսակետին հակառակ հրահանգ ապրու:

(Պահ մը Ժողովին մէջ չփոթութիւն տիրեց)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ազգ. ժողովոյ արժանապատուութիւնը կը բռնաբարէք այս տեսակ աղմուկներ հանելով:

Ա. ՎՈՒՄԵՍՆ ԷՖ.— Վարչութիւնը օրուան Ազգ. ժողովոյ տեսակէտին հակառակ գործած է:

(Ժխորը շարունակուելով սրահին մէջ եւ հոյն միջոցին ուսանք ալ խօսք ուղեկով, առանապես էֆ. պահ մը դադար տուաւ:)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Տեսար. այսպիսի կարեւոր խնդրի մը աղմուկի մէջ չկրնար լուծուիլ, ընդհակառակը ամենէն աւելի հանդարտութիւն կը պահանջէ, ուստի այդ կերպով գործենք եւ եզրակացութեան մը գտնք: Խօսքի կարգը Թէրզեան էֆ.ին է, որ իր իրաւունքը կուտայ Զօհրայ էֆ.ի:

Դ. ԶՈՀՐԱՊ ԷՖ.— Ժողովին ցոյց տուած վրդովմունքը շատ հասկնալի է եւ յառաջ եկած է այն անակնկալ կարգադրութենէն զոր ըրած է Ռուսիոյ ներքին գործոց նախարարը, արգելքներ դնելով, որոնք հետեւանքներ ալ պիտի ունենան, զրկելով մասնակցելէ թրքահայերը իրենց թիւին համապատասխան քուէով կաթողիկոսական ընտրութեան:

Հետեւաբար այս ժողովին մէջ տեսնուած յուզումը դժգոհութիւն մըն է, բայց երբ քննենք կը տեսնենք որ այս յուզումները ցոյց կուտայ թէ միասիրտ կ'ուզենք ապահովել մեր իրական մասնակցութիւնը կաթողիկոսական ընտրութեան մէջ եւ այդ է պատճառը որ իրարու դէմ բուռն զայրոյդ կը ցուցնենք:

Ա. ՎՈՒՄԵՍՆ ԷՖ.— (Ընդմիջելով) օրէնքի եւ արժանապատուութեան ուսմանի մէջ:

Դ. ԶՈՀՐԱՊ ԷՖ.— (Շարունակելով) երբէք չկրնար ըլլալ որ օրէնքի եւ արժանապատուութեան դէմ ըստի:

Այս ժողովը ինչպէս ուրիշ ասաններ այս անգամ ալ պիտի կատարէ իր պարտականութիւնը, սակայն պէտք է դիտել նաեւ թէ մեր Վարչութիւնն ալ իր պարտականութիւնը կատարելու մէջ փոյթ ունեցաւ եւ այսօր Ռուս

կառավարութեան ներկայացուցչին մեղ ըրած բերանացի յայտարարութիւնները գրաւորի հանգամանք եւ զօրութիւն ունին: Ռուսիոյ զեապանը Հայոց ազգին ընտրական իրաւունքները պահպանելու համար աշխատելու խոստում տուած է եւ ասիկա ինքնին արժանի է չնորհակալութեան, ինչպէս արժանի են չնորհակալութեան այն խօսքերը, զորոնք ըրած է Ռուս կառավարութեան հեղինակաւոր ներկայացուցիչը Հայ ազգին նկատմամբ: Ռուսիոյ պէտք է վստահութիւն յայտնել եւ արտօնել վարչութիւնը շարունակելու իր դիմումները եւ բանակցութիւնները որոնց կը հետեւի ազգը ուշադրութեամբ: Այս ամիս կը կարգաւ հետեւեալ բանաձեւը, զոր իմ 14 ընկերակիցներս ստորագրած են:

Ազգ. երեսփոխանական ժողովը գոհունակութեամբ լսեց այն յայտարարութիւնները զորս Ռուսական վսեմ. Դեպքներ, հեղինակաւոր ներկայացուցիչ իր կառավարութեան, մեր պատրիարքական փոխանորդին ըրած վստահեցնելով զայն թէ Ռուսական կառավարութեան անկողն փափաքն է ազատ ձգել հայ ժողովուրդը իր կաթողիկոսը ընտրելու իրաւունքին մէջ:

Ժողովը չնորհակալութիւն կը յայտնէ նաեւ վսեմ դեպքանին սիրալիր եւ բարեացակամ վերաբերումին հանդէպ հայ ազգին յայտնի իրաւունքներուն պահպանման մասին:

Ժողովը կատարեալ վստահութիւն կը յայտնէ վսեմ. դեպքանին կատարած ջանքերուն մասին կը յուսայ որ չուտով պիտի բարձուին այն արգելքները որոնք Ռուսական կառավարութեան յայտնուած բաղձանքին հակառակ հետեւանք պիտի ունենան իրապէս զրկելով թուրքիոյ հայ հասարակութիւնը կաթողիկոսական ընտրութեան մասնակցելէ: Հետեւանք որ դժուարին վիճակի մը մէջ պիտի դնէ թուրքիոյ հայ ժողովուրդը իր հայրապետին հանդէպ:

Այս զգացումով եւ այս յոյսով կարծես ազգ. վարչութիւնը եւ անոր Սրբազան նախագահը որպէսզի շարունակեն իրենց գիւմումները Ռուսական վսեմ դեպքանին մօտ եւ ընեն ուրիշ ամէն դիմումներ զորս յարմար պիտի դատեն ապահովելու համար թուրքիոյ հայ ժողովրդեան իրական մասնակցութիւնը նա-

խըմնաց ձեւով կաթողիկոսական ընտրութեան մէջ:

Աւելցնելով որ համօրէն հայ ժողովուրդը Թուրքիա թէ այլուր միեւնոյն զգացումով պիտի հետեւի իրենց աշխատութիւններուն:

Ստամբուլի երեսփոխան Գ. ԶՈՀՐԱՊ

Պարգեւ Փափազեան, Գ. Վարդ. Պալաքեան, Տաճատ քչ. Փաշաեան, Հմայեակ քչ. Էնքսէրճեան Լեւոն Սաաթճեան, Թ. Արեւեան Ե. Օտեան, Ե. Պէյազճեան, Մարկոս Նաթանեան, Յ. Ք. Զմանկիւլեան, Օ. Տէրունեան, Միհրդատ Հայկազն, Տիրան Կիւմիշեան, Թ. Պոյաճեան:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Նախ եւ առաջ վիճաբանութեան փակումը Զեր քուէին կ'ենթարկեմ:

(Ժողովը 31 ձայնով ընդունեցաւ վիճաբանութեան փակումը:)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ուրիշ բանաձեւեր ալ կ'ան անոնք ալ կարգանք եւ յետոյ կը քուէարկենք:

Ազգային ժողովս պատգամաւորի ծանօթ խնդրոյն վրայ Տեղապահ Ս. Հօր կողմանէ արուած տեղեկագիրը նկատողութեան առնելէ յետոյ, կը յանձնարարէ վարչութեան (Ռուս վսեմ. Դեպքանի ցոյց տուած հոգածութեան համար չնորհակալութիւն յայտնել եւ ինչպէս դեպքանին ինքն յայտնած է մինչեւ յառաջիկայ չորեքշաբթի արդիւնքին սպասել:

Եւ հակառակ ամէն ջանից եթէ մինչեւ այն օրը յաջող արդիւնք մը յառաջ չի դրոյ, կը յանձնարարէ վարչութեան նորէն խնդիրը բերել առ անգային ժողովն լիակատար անգլիկազրով մը:

Վառաձագուն Մանուկեան

(Այս բանաձեւը ստացաւ 9 քուէ:)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Նախ եւ առաջ Զօհրայ էֆ.ի բանաձեւը Զեր քուէին կ'ենթարկեմ:

(Ժողովը 41 քուէով ընդունեց Զօհրայ էֆ.ի բանաձեւը):

Ո. ՄԱՐՏԻԿԵԱՆ ԷՖ.— Վարչութիւնը կ'ընդունի Զօհրայ էֆ.ի բանաձեւը եւ բընականաբար երբ խնդիրը իր իրաւասութենէն վեր գտնէ, եւ պէտք ունենայ պիտի բերէ ժողովին:

Ա. ՎՈՒՄԵՍՆ ԷՖ.— Դիւ առաջ խօսիլ ուղեցի բայց ժողովն յարմար չգտնեց վիճաբանութեան շարունակութիւնը, հետեւեալ բանաձեւը Զեր ուշադրութեան կը յանձնեմ:

«Նկատելով որ Ազգ. վարչութիւնը ապօրինի նախընթաց մըն է ըրած, արդէն ընտրուած երեսփոխաններուն անունները հաղորդելով Ռուս դեպքանին, Ազգ. ժողովը կը հրաւիրէ վարչութիւնը պաշտպանել Հայ եկեղեցոց օրէնքներուն եւ Պօլոթէնիոյ կանոններուն սահմանին մէջ թրքահայերու մասնակցելու իրաւունքը ամենայն Հայոց կաթողիկոս ընտրութեան մէջ, միակ ելքը կը համարի համաձայն արժանապատուութեան ինքնօրէն եւ անկախ Հայ եկեղեցիին»:

(Այս բանաձեւը ստացաւ 3 քուէ:)

Ո. ՄԱՐՏԻԿԵԱՆ ԷՖ.— Վարչութեան ջանքերը կը ձգտին, յանուն ազգին 'ր Հայրապետի ընտրութեան նախընթաց սովորութիւններուն շարունակութեան ապահովութիւնը: Բոլորովին կը մերժենք թէ մենք կամայական կամ մեր եկեղեցիի ոգիին հակառակ ուղղութեան կը հետեւինք կը յայտարարենք թէ կաթողիկոսական ընտրութեան ինչպէս ուրիշ նման կարեւոր խնդիրներու առջեւ միշտ պիտի դիմենք Ազգ. ժողովին վերջնական վճիռը անոր միջոցաւ ձեռք բերելու համար:

Ա. ՎՈՒՄԵՍՆ ԷՖ.— Եթէ դուք Զեր խօսքը եւ կ'առնէք եւ ալ բանաձեւի մէջ Զեր անարկող հատուածը կը վերցնեմ: Միայն թէ ամօթ կ'ըլլայ այս ժողովին երբ առանց

հետեւանքի մասին ու եւ է դադարաւոր ունեւնալու չնորհակալութիւն կը յայտնէ ուստական դեպքանին:

Պ. ՓԱՓԱԶԵԱՆ ԷՖ.— Մի անարգէք այս ժողովը:

Վ. ՍԷՐԷՆԿԻԻԼԵԱՆ ԷՖ.— Ազգ. ժողովը անարգող չկայ:

Պ. ՓԱՓԱԶԵԱՆ ԷՖ.— Այո կ'անարգէք

Ազգ. ժողովը. խորհրդարանական լեզու է ասիկայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Այս խնդիրը վերջացած է, ժողովը մեծամասնութիւն ունի օրակարգի պիտի անցնինք:

(Ժողովատեղին մէջ ժխտը տիրած էր և անխելի կը մնար աստեղծութիւն ԷՖ.ին ազգաբարութիւնը, հզօնեալար աստեղծութիւնը ժամը 6 ին):

Ազգ. Ընդհ. Ժողովոյ

Ասեճապիր
ՄԱՐԿՈՍ ՆԱՓԱՆԵԱՆ

Ասեճապետ
ՄԱՆՈՒԿ ԱԶԱՐԵԱՆ

